Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի
2007 թվականի ապրիլի 11-ի թիվ 13-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2006 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2007թ.

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2006 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթների համապատասխան:

Հաշվետու տարում Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղվել է «Հանձնաժողովի 2006 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը: Աշխատանքները տարվել են ստացված դիմում-բողոքներում ներառված՝ մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող տնտեսվարող սուբյեկտների գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրության, մրցակցային միջավայրի կարգավորման, ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման և Օրենքի կատարելագործման ուղղությամբ:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

2006 թվականին Հանձնաժողովը շարունակել է աշխատանքներն՝ ուղղված տնտեսական մրցակցության պաշտպանության պետական քաղաքականության իրականացմանը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների կատարելագործմանը, ապրանքային շուկաներում Օրենքի հնարավոր խախտումների կանխմանը և արգելմանը, ձեռնարկատիրության զարգացմանը նպաստմանը, Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովմանը, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը: Այդ նպատակով Հանձնաժողովը 2006 թվականին ուսումնասիրել և վերլուծել է ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակը ու կատարել ուսումնասիրված ապրանքային շուկաների շարունակական դիտանցում (մոնիտորինգ), ինչպես նաև ՋԼՄ հրապարակումների կամ տնտեսվարող սուբյեկտների դիմում-բողոքների հիման վրա հարուցել վարչական վարույթներ և ընդունել համապատասխան որոշումներ:

Հանձնաժողովի կողմից 2006 թվականին ուսումնասիրվել է 40 ապրանքային շուկա, այդ թվում. գյուղատնտեսական արտադրանքի և սննդի արդյունաբերության ոլորտի՝ 13, ծառայությունների ոլորտի՝ 8, բնական մենաշնորհների և փոստային ծառայությունների ոլորտի՝ 8, կենցաղային ապրանքների՝ 1, ավտոմոբիլային տրանսպորտի՝ 3, շինարարական նյութերի՝ 5

և էներգակիրների՝ 2 ապրանքային շուկա: Նշված ապրանքային շուկաներում ուսումնասիրության արդյունքներով առկա է գերիշխող դիրք ունեցող 29 տնտեսվարող սուբյեկտ:

2006 թվականի ընթացքում Հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստր) գրանցված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշները (իրացման ծավալը, գինը, ինքնարժեքը, ինքնարժեքի կառուցվածքը և դրանց փոփոխությունները յուրաքանչյուր կիսամյակ, ըստ ամիսների):

2006 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կենտրոնացված գրանցամատյանում գրանցվել է գերիշխող դիրք ունեցող 42 տնտեսվարող սուբյեկտ, որոնք գործունեություն են իրականացրել 65 ապրանքային (ծառայության) շուկաներում: Օրենսդրության համաձայն, նշված 42 տնտեսվարող սուբյեկտները սահմանված ժամկետում Հանձնաժողովին են ներկայացրել 2006 թվականի առաջին կիսամյակի ընթացքում իրենց գործունեության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը: Վերոնշյալ տեղեկատվության վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ 53 ապրանքային (ծառայության) շուկաներում էական փոփոխություններ չկան, իսկ մնացած 12 ապրանքային շուկաներում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ՝ ապրանքային (ծառայության) շուկայում տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի կորստի, գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի մասնաբաժնի փոփոխության, ապրանքային /ծառայության/ շուկայում հնարավոր չհիմնավորված (արհեստական) գնի սահմանման, ինչպես նաև հնարավոր հակամրցակցային համաձայնության (գնային փոխհամաձայնության) ուղղություններով: Նշված ապրանքային շուկաներում կատարվել են առավել մանրակրկիտ ուսումնասիրություններ, իրականացվել է դիտանցում, ինչպես նաև ուսումնասիրվել է այդ ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից կիրառվող գնային քաղաքականությունը: Մասնավորապես, ապրանքների իրացման գների փոփոխություններ են արձանագրվել մսամթերքի, գարեջրի, հավի ձվի, շաքարավազի, կարագի, ցեմենտի, շինարարական այլ նյութերի, բենզինի, դիզվառելիքի և այլ ապրանքային շուկաներում: Հանձնաժողովի կողմից ընդունվել է համապատասխան որոշում, որի համաձայն, տնտեսվարող սուբյեկտներին հանձնարարվել է վերանայել իրենց կողմից ապրանքների իրացման գները, ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ գների չհիմնավորված բարձրացման (պահպանման) և հնարավոր հակամրցակցային համաձայնությունների (համաձայնեցված գործողությունների կամ վարքագծի) արդյունքում միանման գների սահմանման քաղաքականության իրականացումը (կիրառումը) կանխելու և (կամ) վերացնելու ուղղությամբ:

Մինչև 2007 թվականի հունվարի 1-ը կենտրոնացված գրանցամատյանում գրանցված տնտեսվարող սուբյեկտների թիվը հասել է 60-ի, որոնք ունեն գերիշխող դիրք 84 ապրանքային (ծառայության) շուկաներում:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղեկատվություն է պահանջվել ուսումնասիրվող ապրանքային ոլորտներում գործող 1314 տնտեսվարող սուբյեկտներից: Նշված սուբյեկտներից 1134-ը ներկայացրել են պահանջվող տեղեկատվությունը, 54-ը տուգանվել են պահանջվող տեղեկատվությունը չներկայացնելու համար, 126 տնտեսվարող սուբյեկտներ ծանուցումներ չեն ստացել, վերջիններիս հայտնաբերման նպատակով Հանձնաժողովը դիմել է ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալությանը և «Հայփոստ» ՓԲԸ-ին:

Տնտեսական մրցակցության միջավայրի ճշգրիտ վերլուծության համար դեռևս չլուծված խոչընդոտ է մնում տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացվող թերի և ոչ լիարժեք տեղեկատվությունը: Մասնավորապես, որոշ ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության տվյալների միջև առկա էր անհամապատասխանություն: Տեղեկատվության ոչ հավաստի լինելը հաստատվում էր նաև անուղղակի ցուցանիշներով: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, համեմատելով Հայաստանի Հանրապետությունում մեկ շնչին բաժին ընկնող սննդամթերքի (8 ապրանքատեսակ) փաստացի սպառման ցուցանիշը 20 այլ երկրների (ԱՊՀ անդամ երկրներ, Բալթիայի, Եվրամիության և այլ զարգացած երկրներ) նույնատիպ ցուցանիշի հետ ակնհայտ է, որ այդ ցուցանիշը Հայաստանի Հանրապետությունում 3-7 անգամ ցածր է, նշված երկրների միջին ցուցանիշից: Այս փաստը ստվերի առկայության հետևանք է, որը շարունակում է մնալ բարեխիղճ մրցակցության ձևավորման համար հիմնական խոչընդոտներից: Ըստ տարբեր աղբյուրների, Հայաստանի Հանրապետությունում «ստվերային տնտեսության» բաժինը հասնում է 50 տոկոսի: Նշված իրավիճակը առավել հատուկ է սննդի ոլորտի (հիմնականում տեղական արտադրության հաշվին) ապրանքային շուկաներին: Ուսումնասիրության նշված արդյունքները տրամադրվել են համապատասխան պետական մարմիններին:

Ուսումնասիրությունները և դիտանցումները ցույց են տվել, որ մրցակցության իրավիճակը մի շարք ապրանքային շուկաներում դեռևս չի հասնում բնականոն մակարդակի: 2006 թվականին իրականացված հետազոտությունների արդյունքում բացահայտվել են անբարեխիղճ մրցակցության մի շարք դրսևորումներ «Լավաշ», «Կարագ», «Ալկոհոլային խմիչքներ» և «Հանքային ջրերի շշալցում» ապրանքային շուկաներում: Այս շուկաներում Հանձնաժողովն

աշխատանքները շարունակել է՝ անբարեխիղճ մրցակցության դադարեցման ու հետագայում բացառման նպատակով:

Գերիշխող դիրքի չարաշահման հայտնաբերման ուղղությամբ Հանձնաժողովի կողմից կատարված մի շարք ուսումնասիրությունները ստացել են հասարակական մեծ հնչեղություն:

Հանձնաժողովը ուսումնասիրել է «Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ», «Տվյալների հաղորդման միջազգային հասանելիության ծառայություն (ինտերնետ հասանելիության համար)» և «Միջազգային վարձակալված շղթաների ծառայություն (ինտերնետ հասանելիության համար)» ապրանքային շուկաներում «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ի վարքագիծը և ընդունել համապատասխան որոշումներ:

Զանգվածային լրատվամիջոցներում հրապարակումների հիման վրա ավիավառելիքի ծառայությունների ոլորտում Օրենքի հնարավոր խախտման կապակցությամբ իրականացվել են համապատասխան հետազոտություններ՝ ավիավառելիքի պակասի պատճառները պարզելու նպատակով: Հանձնաժողովի կողմից ընդունվել է որոշում, որով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը առաջարկվել է սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Հանձնաժողովի կողմից 2006 թվականին գումարվել է 27 նիստ և ընդունվել 146 որոշում, որոնցից Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվությունը չներկայացնելու համար պատասխանատվություն սահմանող՝ 54 որոշում, անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող՝ 10 որոշում, գերիշխող դիրքի չարաշահման համար պատասխանատվություն սահմանող՝ 1 որոշում: 2006 թվականին ՀՀ տնտեսական դատարան ներկայացված 53 հայցադիմումներով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 75.200.000 դրամ, որոնցից 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ 10-ը՝ 5.000.000 դրամ ընդհանուր գումարով, գտնվում են ՀՀ տնտեսական դատարանի վարույթում, 2-ը՝ 1.000.000 դրամ ընդհանուր գումարով, գտնվում են ՀՀ վերաքննիչ դատարանի վարույթում, 1-ը՝ 500.000 դրամ ընդհանուր գումարով, գտնվում է ՀՀ վճռաբեկ դատարանի վարույթում: ՀՀ տնտեսական դատարանի կողմից բավարարված հայցերի հիման վրա տրվել է 26 կատարողական թերթ՝ 12.500.000 դրամ ընդհանուր գումարային պահանջով, որոնք ներկայացվել են հարկադիր կատարման, իսկ 5-ը՝ 2.500.000 դրամ ընդհանուր գումարով, կներկայացվեն կատարողական թերթերը տրամադրվելուց հետո: Հանձնաժողովի կողմից ներկայացված 53 հայցադիմումից 4-ը՝ 1.600.000 դրամ ընդհանուր գումարով մերժվել է, 1-ը՝ 500.000 դրամ ընդհանուր գումարով կարճվել: Ընդդեմ Հանձնաժողովի ներկայացվել է 5 դիմում և 2 վճռաբեկ բողոք:

Հանձնաժողովը մասնակցություն է ունեցել միջազգային կառույցների կողմից կազմակերպվող միջոցառումներին, իրականացրել արտերկրի առաջատար փորձի փոխանակում ու ներդրում:

2006 թվականին Հանճնաժողովը շարունակել է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Պատրաստվել և գործարկվել է Հանճնաժողովի նոր, արդիական, on-line կառավարման լուծումներով, եռալեզու www.competition.am պաշտոնական ինտերնետային կայքը, որը «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի» կողմից կազմակերպված մրցույթի արդյունքում «էլեկտրոնային կառավարման» անվանակարգում արժանացել է առաջին կարգի մրցանակի:

ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանճնաժողովի 2007 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Լրամշակվել է Հանճնաժողովի աշխատակազմի կանոնադրությունը, որի արդյունքում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ: ՀՀ կառավարության որոշմամբ Հանճնաժողովին տրամադրվել է նոր տարածք, կատարվել են վերանորոգման աշխատանքներ, 2007 թվականի սկզբին Հանճնաժողովը տեղափոխվել է նոր շենք:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Հաշվետու ժամանակաշրջանում ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակի ուսումնասիրություններն իրականացվել են ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների (ծառայությունների) իրացման ծավալների հիման վրա, որոշվել են շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների բաժինները, ապրանքային շուկաների համակենտրոնացման ցուցանիշները: Ապրանքային շուկաների վերլուծության համար հիմք են հանդիսացել 2005 թվականի, իսկ որոշ դեպքերում՝ 2006 թվականի առաջին կիսամյակի տվյալները:

Աղյուսակ 1

2005 թվականին գյուղատնտեսական արտադրանքի և սննդի արդյունաբերության մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը, առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների անվանումը, մասնաբաժինը

N	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Շուկայի ծավալը		Շուկայի մասնակից ների քանակը			Առաջատար սուբյեկտը		
								անվանումը	Բաժինը (%)	
			բն.	արժ. (մլն. դրամ)	ընդամենը	ներկրող	առևտրավաճ		բն.	արժ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	«Ադամաթուզ»	տ	8307,3	2488,1	5	5	X	«Քեթրին» ՍՊԸ	51,0	48,7
								«Սևան» ՍՊԸ	48,9	51,1
								Սեյրան Ավետիսյան ԱՁ	0,1	0,1
2	«Ցիտրուսային պտուղներ (բացի կիտրոնից)»	տ	4331,2	671,8	29	29	X	Սարգիս Ավետիսյան ԱՁ	32,1	15,0
								Խաչատուր Առաքելյան ԱՁ	9,5	5,2
								Մարտիկ Հարությունյան ԱՁ	6,8	7,1

3	«Թեյ»	տ	192,2	544,1	32	32	X	«Վալետտա» ՍՊԸ	39,9	26,5
								«Էսթինգ» ՍՊԸ	18,7	23,2
								«Մալիկա»	10,5	11,5
4	«Սուրճ»	տ	6593,8	4766,8	54	54	X	«Կաֆե դյու Բրազիլ» ՍՊԸ	35,2	31,0
								«Արմեն Համիկ եղբայրներ» ՍՊԸ	22,9	21,0
								«Գոլդեն Լեոն» ՍՊԸ	15,8	17,7
5	«Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ»	տ	570,4	887,9	36	X	36	«Ակվատեխսավտոմատիկա» ՓԲԸ	36,0	35,1
								«Ա.Հովհաննիսյան» ՍՊԸ	14,1	14,1
								«Տարոնիկ» ՍՊԸ	8,1	7,8
6	«Սառեցրած ձկներ»	տ	4725,7	2069,5	4	4	X	«Մալիկա» ՍՊԸ	95,1	98,6
								«Բրիանդի Կո» ՍՊԸ	3,0	1,1
								Հովհաննես Հարությունյան ԱՁ	1,7	0,18
7	«Շաքարավազ»*	տ	29208,1	5923,7	21	20	1	«Սալեքս Գրուպ» ՍՊԸ	91,4	92,4
								«Սևանի շաքարի գործարան» ՓԲԸ	7,0	6,2
								«Գրանդ Քենդի» ՍՊԸ	1,5	1,3
8	«Մակարոնեղեն»	տ	5558,9	1768,1	101	30	71	«ԷյէյէՖՓիՍի ՀՁ» ՍՊԸ	30,2	34,0
								«Արսեն և Երվանդ» ՍՊԸ	11,0	10,5
								«Մելդավ» ՍՊԸ	8,5	8,0
9	«Շոկոլադ և շոկոլադե արտադրանք»	տ	4337,5	7039,03	71	59	12	«Դերժավա-Ս ՀՁ» ՓԲԸ	25,5	16,9
								«Գրանդ Քենդի» ՍՊԸ	16,1	20,9
								«Ապեյրոն» ՍՊԸ	15,4	16,3
10	«Կոնյակ»	հ. լ	1360,2	1412,5	37	29	9	«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ	17,8	49,9
								«Երասխի գինու գործարան» ՍՊԸ	22,6	10,5
								«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ	X	9,4
11	«Գինի»	հ. լ	3059,2	2811,9	51	18	33	«ՄԱՊ» ՓԲԸ	23,8	31,2
								«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ	18,2	13,4
								«Գետափի գինու գործարան» ՍՊԸ	12,5	14,4
12	«Արդյունահանված հանքային ջուր»*	հ. լ	6834,2	49,5	6	X	6	«Աղամանդ Կ» ՍՊԸ	95,1	95,6
								«Բյուրական» ՍՊԸ	3,1	2,6
								««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	0,7	0,9
13	«Շշալցված աղբյուրի ջուր»*	հ. լ	1430,4	182,5	5	X	5	««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	44,8	53,2
								«ՄԳԱ Վոթքը» ՍՊԸ	42,8	31,7
								«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ	9,8	12,3

* համաձայն 2006 թվականի 1-ին կիսամյակի տվյալների

** մեկ տնտեսվարող սուբյեկտը զբաղվում է և ներկրմամբ, և արտադրությամբ:

«Աղամաթզուզ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 5 տնտեսվարող սուբյեկտ: Աղամաթզի իրացման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 8307,3 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 2488,1 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինների գումարը կազմել է 99,96 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների՝ «Քեթրին» և «Սևան» ՍՊ ընկերությունների մասնաբաժինները ապրանքային շուկայում համապատասխանաբար կազմում են 51,0 և 48,9 տոկոս:

«Ցիտրուսային պտուղներ (բացի կիտրոնից)» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 29 տնտեսվարող սուբյեկտ: Ցիտրուսային պտուղների իրացման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 4331,2 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 671,8 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 48,4 տոկոս:

«Թեյ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 32 տնտեսվարող սուբյեկտ: Թեյի ներկրման ծավալը 2005 թվականին կազմել է 281,6 տոննա, իրացման ծավալը բնեղեն արտահայտությամբ՝ 192,2 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 544,1 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 69,1 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Վալետտա» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 39,9 տոկոս:

«Սուրճ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 54 տնտեսվարող սուբյեկտ: Սուրճի ներկրման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 11,4 հազ. տոննա, իրացման ծավալը՝ 6593,8 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 4766,8 մլն. դրամ, արտահանման ծավալը՝ 2133,2 տոննա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 73,9 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Կաֆե դյու Բրազիլ» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 35,2 տոկոս:

«Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 36 տնտեսվարող սուբյեկտ: Կարմրախայտ և իշխան ձկնատեսակների իրացման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 570,4 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 887,9 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 58,2 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 36,0 տոկոս:

«Սառեցրած ձկներ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 4 տնտեսվարող սուբյեկտ: Սառեցրած ձկների իրացման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 4725,7 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 2069,5 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 99,8 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Մալիկա» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 95,1 տոկոս:

«Շաքարավազ» ապրանքային շուկայում 2006 թվականի 1-ին կիսամյակում գործել է 21 տնտեսվարող սուբյեկտ: Շաքարավազի ներկրման ծավալը 2006 թվականի 1-ին կիսամյակում կազմել է 33743,4 տոննա, արտադրության ծավալը՝ 601,8 տոննա, սեփական արտադրության մեջ օգտագործվել է 2131,2 տոննա, իրացման ծավալը բնեղեն արտահայտությամբ կազմել է 29208,1 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 5923,7 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է

99,9 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Սալեքս Գրուփ» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 91,4 տոկոս:

«Մակարոնեղեն» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 101 տնտեսվարող սուբյեկտ: Մակարոնեղենի ներկրման ծավալը 2005 թվականին կազմել է 3316,5 տոննա, արտադրության ծավալը՝ 2781,9 տոննա, իրացման ծավալը բնեղեն արտահայտությամբ կազմել է 5558,9 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 1768,1 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 49,7 տոկոս:

«Շոկոլադ և շոկոլադե արտադրանք» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 71 տնտեսվարող սուբյեկտ: Շոկոլադի և շոկոլադե արտադրանքի ներկրման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 3679,1 տոննա, արտադրության ծավալը՝ 1161,0 տոննա, իրացման ծավալը՝ 4337,5 տոննա, արժեքային արտահայտությամբ՝ 7039,03 մլն. դրամ, արտահանման ծավալը՝ 31,02 տոննա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 57,0 տոկոս:

«Կոնյակ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 37 տնտեսվարող սուբյեկտ: Կոնյակի ներկրման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 9,1 հազ. լիտր, արտադրության ծավալը՝ 10101,3 հազ. լիտր, իրացման ծավալը՝ 1360,2 հազ. լիտր, արտահանման ծավալը՝ 9024,4 հազ. լիտր: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ արժեքային արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 69,8 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 49,9 տոկոս:

«Գինի» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 51 տնտեսվարող սուբյեկտ: Գինու ներկրման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 201,1 հազ.լիտր, արտադրության ծավալը՝ 4589,0 հազ. լիտր, իրացման ծավալը՝ 3059,6 հազ. լիտր, արտահանման ծավալը՝ 475,6 հազ. լիտր: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 54,5 տոկոս:

«Արդյունահանված հանքային ջուր» ապրանքային շուկայում 2006 թվականի 1-ին կիսամյակում գործել է 6 տնտեսվարող սուբյեկտ: Արդյունահանված հանքային ջրի արդյունահանման ծավալը 2006 թվականի 1-ին կիսամյակում բնեղեն արտահայտությամբ կազմել է 14134,6 հազ. լիտր, իրացման ծավալը՝ 6834,2 հազ. լիտր: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը 2006 թվականի 1-ին կիսամյակում կազմել է 98,9 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող

տնտեսվարող սուբյեկտի՝ «Աղամանդ Կ» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում 2006 թվականի 1-ին կիսամյակում կազմել է 95,1 տոկոս:

«Շշալցված աղբյուրի ջուր» ապրանքային շուկայում 2006 թվականի 1-ին կիսամյակում գործել է 5 տնտեսվարող սուբյեկտ: Շշալցված աղբյուրի ջրի շշալցման ծավալը 2006 թվականի 1-ին կիսամյակում բնեղեն արտահայտությամբ կազմել է 1847,6 հազ. լիտր, իրացման ծավալը՝ 1430,4 հազ. լիտր, արտահանման ծավալը՝ 118,5 հազ. լիտր: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը 2006 թվականի 1-ին կիսամյակում կազմել է 97,4 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների՝ ««Ջրնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի և «ՄԳԱ Վոթքըր» ՍՊԸ-ի մասնաբաժինները ապրանքային շուկայում 2006 թվականի 1-ին կիսամյակում կազմել են համապատասխանաբար՝ 44,8 և 42,8 տոկոս:

Աղյուսակ 2

2005 թվականին ծառայությունների ոլորտի մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը, առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների անվանումը, մասնաբաժինը

N	Ապրանքային շուկայի անվանումը	Շուկայի ծավալը	Շուկայի մասնակից ների քանակը	Առաջատար սուբյեկտը		
				անվանումը	Բաժինը (%)	
		արժ. (մլն. դրամ)			քն.	արժ.
1	2		5	6	7	8
1	«Ինտերնետ ծառայություններ»	1980,4	10	«Արմինկո» ՍՊԸ		37,1
				«Նետսիա» ՀՁ ՍՊԸ		18,1
				«Կոռնետ ԱՄ» ՓԲԸ		15,6
2	«Դեղերի և դեղանյութերի պետական գրանցման համար փորձաքննություն»	համաձայն լիցենզիայի	1	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ	100	
3	«Դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման հավաստագրման համար փորձաքննություն»	համաձայն լիցենզիայի	1	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ	100	
4	«Քիմիական մաքրման ծառայություններ»	90,5	13	«Նյու Շահաբ» ՍՊԸ		40,4
				««Արաբկիր» քիմմաքրում» ՍՊԸ		9,3
				«Էքսպրոմտ» ՍՊԸ		9,1
5	«Երևան- Անթալիա (Թուրքիա)- Երևան ուղղությամբ ավիատոմսերի իրացում»		1	«Բագրատուր» ՍՊԸ	100	
6	«Երևան- Նոր Խարբերդ և հակառակ ուղղությամբ ուղևորափոխադրումներ»		1	«Տիգրան» ՍՊԸ	100	
7	«Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ»	665,2 *	2	«Արմենթել ՀՁ» ՓԲԸ	47,3	
				«Ռ-Տելեկոմ» ՓԲԸ	52,7	
8	«Տվյալների հաղորդման միջազգային հասանելիության ծառայություն (ինտերնետ հասանելիության համար)»	համաձայն լիցենզիայի	1	«Արմենթել ՀՁ» ՓԲԸ	100	

* հաշվարկվել է բնեղեն արտահայտությամբ ակտիվացրած քարտերի քանակը

«Ինտերնետ ծառայություններ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 10 տնտեսվարող սուբյեկտ: Ինտերնետ ծառայությունների իրացման ծավալը 2005 թվականին

արժեքային արտահայտությամբ կազմել է 1980,4 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ արժեքային արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 70,8 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Արմինկո» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 37,1 տոկոս:

«Դեղերի և դեղանյութերի պետական գրանցման համար փորձաքննություն» և **«Դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման հավաստագրման համար փորձաքննություն»** ապրանքային շուկաներում 2005 թվականին միակ տնտեսվարող սուբյեկտը՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն է, որը չունի մրցակից:

«Քիմիական մաքրման ծառայություններ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 13 տնտեսվարող սուբյեկտ: Քիմիական մաքրման ծառայությունների իրացման ծավալը 2005 թվականին արժեքային արտահայտությամբ կազմել է 90,5 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ արժեքային արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 58,8 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Նյու Շահաբ» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 40,4 տոկոս:

«Երևան-Անթալիա (Թուրքիա)- Երևան ուղղությամբ ավիատոմսերի իրացում» ապրանքային շուկայում 2005 թվականին գործող միակ տնտեսվարող սուբյեկտը՝ «Բագրատուր» ՍՊԸ-ն է, որը և հետևաբար շուկայում ունի 100 տոկոս մասնաբաժին:

«Երևան-Նոր Խարբերդ և հակառակ ուղղությամբ ուղևորափոխադրումներ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործող միակ տնտեսվարող սուբյեկտը՝ «Տիգրան» ՍՊԸ-ն է, որը և հետևաբար շուկայում ունի 100 տոկոս մասնաբաժին:

«Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 2 տնտեսվարող սուբյեկտ: Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայությունների իրացման ծավալը բնեղեն արտահայտությամբ կազմել է 665,2 հազար հատ ակտիվացրած քարտ: Երկու գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների՝ «Արմենթել ՀՁ» ՓԲԸ և «Ռ-Տելեկոմ» ՓԲԸ-ի մասնաբաժինները ապրանքային շուկայում համապատասխանաբար կազմել են 47,3 և 52,7 տոկոս:

«Տվյալների հաղորդման միջազգային հասանելիության ծառայության (ինտերնետ հասանելիության համար)» ապրանքային շուկայում 2005 թվականին միակ տնտեսվարող սուբյեկտը՝ «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ն է, որը չունի մրցակից:

Աղյուսակ 3

2005 թվականին փոստային ծառայությունների ոլորտի և բնական մենաշնորհների մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը, առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների անվանումը, մասնաբաժինը

N	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Շուկայի ծավալը		Շուկայի մասնակից ների քանակը	Առաջատար սուբյեկտը		
						անվանումը	Բաժինը (%)	
			բն.	արժ. (մլն. դրամ)			բն.	արժ.
1	2	3	4	5	6	7	8	9
1	«Փոստային կապի և սուրհանդակային ճեպընթաց կապի ծառայություններ»	հազ.հատ	824,7	672,9	10	«Հայփոստ» ՓԲԸ		59,1
						«Տրանսիմպեքս» ՍՊԸ (FedEx)**		21,9
						«Յումակս» ՍՊԸ (DHL)**		10,5
2	«Ներպետական նամակագրական բղթակցության ծառայություններ»		1009,7	21,4	1	«Հայփոստ» ՓԲԸ	100	
3	«Հեռագրային կապի ծառայություն»		43,1	35,4	1	«Հայփոստ» ՓԲԸ	100	
4	«Երկաթուղային ուղևորափոխադրումների ծառայություններ»,				1	«Հայկական երկաթուղի» ՓԲԸ	100	
5	«Երկաթուղային բեռնափոխադրումների ծառայություններ»							
6	«Երկաթուղային շարժակազմի շահագործման ծառայություններ»							
7	«Երկաթուղային ենթակառուցվածքի շահագործման ծառայություններ»							
8	«Խմելու ջուր»	հազ.խ.մ		40487,03	1	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	100	
				7986,0	1	«Շիրակ- ջրմուղկոյուղի» ՓԲԸ	100	
				3006,0	1	«Լոռի- ջրմուղկոյուղի» ՓԲԸ	100	
				1564,7	1	«Նոր Ակունք» ՓԲԸ	100	

** միայն սուրհանդակային (express) կապի ծառայություններ

«Փոստային կապի և սուրհանդակային ճեպընթաց կապի ծառայություններ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 10 տնտեսվարող սուբյեկտ: Փոստային կապի և սուրհանդակային ճեպընթաց կապի ծառայությունների իրացման ծավալը 2005 թվականին արժեքային արտահայտությամբ կազմել է 672,9 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ արժեքային արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 91,5 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 59,1 տոկոս:

«Ներպետական նամակագրական բղթակցության ծառայություններ» և «Հեռագրային կապ» ապրանքային շուկաներում 2005 թվականին գործող միակ տնտեսվարող սուբյեկտը՝ «Հայփոստ» ՓԲԸ-ն է, որը չունի մրցակից:

«Երկաթուղային բեռնափոխադրումների ծառայություններ», «Երկաթուղային ուղևորափոխադրումների ծառայություններ», «Երկաթուղային շարժակազմի շահագործման ծառայություններ», «Երկաթգծի ենթակառուցվածքի շահագործման ծառայություններ»

ապրանքային շուկաներում 2005 թվականին գործող միակ տնտեսվարող սուբյեկտը՝ «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ն է, որը չունի մրցակից:

«Խմելու ջուր» ապրանքային շուկայում 2005 թվականի ընթացքում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից իրացվել է 40487,0 հազ. խմ ջուր, «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից՝ 7986,0 հազ.խ.մ ջուր, «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 3006,0 հազ. խ.մ ջուր և «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից՝ 1564,7 հազ. խ.մ ջուր: Նշված 4 ընկերություններն իրենց կողմից սպասարկվող տարածքներում միակ տնտեսվարող սուբյեկտն են և ունեն 100 տոկոս մասնաբաժին:

Աղյուսակ 4

2005 թվականին կենցաղում օգտագործվող էլեկտրական լամպերի ապրանքային շուկայի իրացման ծավալը, ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը, առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների անվանումը, մասնաբաժինը

N	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Շուկայի ծավալը		Շուկայի մասնակիցների քանակը			Առաջատար սուբյեկտը		
								անվանումը	Բաժինը (%)	
			բն.	արժ. (մլն. դրամ)	ընդամենը	ներկրող	արտադրող		բն.	արժ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	«Կենցաղում օգտագործվող էլեկտրական լամպեր»	հազ. հատ	5820,9	423,8	128	127	1	«Գրանդ Սան» ՍՊԸ	43,4	47,7
								«Կառլիտա» ՍՊԸ	31,1	28,0
								«Ռստանիկ Հայրենյաց» ՍՊԸ	3,5	1,7

«Կենցաղում օգտագործվող էլեկտրական լամպեր» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 128 տնտեսվարող սուբյեկտ, որից միայն մեկն է արտադրող: Կենցաղում օգտագործվող էլեկտրական լամպերի ներկրման ծավալը 2005 թվականին արժեքային արտահայտությամբ կազմել է 214,1 մլն. դրամ, իրացման ծավալը՝ 423,8 մլն. դրամ: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ արժեքային արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 77,4 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Գրանդ Սան» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 47,7 տոկոս:

Աղյուսակ 5

2005 թվականին ավտոմոբիլային տրանսպորտի մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը, առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների անվանումը, մասնաբաժինը

N	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Շուկայի ծավալը		Շուկայի մասնակիցների քանակը			Առաջատար սուբյեկտը		
								անվանումը	Բաժինը (%)	
			բն.	արժ. (մլն. դրամ)	ընդամենը	ներկրող	արտադրող		բն.	արժ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	«Ռուսական արտադրության նոր մարդատար ավտոմեքենաներ»	հատ	4378	34500	12	12	X	«Արմենիա Լադա» ՀՁ	77,82	
								«Կարկոմավտո» ՍՊԸ	17,54	
								«Փայլուզ» ՍՊԸ	2,1	

2	«Շահագործման մեջ եղած մարդատար ավտոմեքենաներ»	հատ	141	67.3	27	27	X	«Արթ Ավտո» ՍՊԸ	12,7	28,1
								«Հ.Ս.Կ. Տրանս» ՍՊԸ	9,9	4,9
								«Ավտոբան Պետ» ՍՊԸ	6,4	3,4
3	«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր»	հատ	246847	2988,1	60	59	1	«Մեծ Անիվ»ՍՊԸ	29,8	33,2
								«Ջեներալ Տրանսուորլդ» Մաս.Քամփնի ՓԲԸ	8,6	5,2
								«Ավզոր» ՍՊԸ	8,2	8,9

«Ռուսական արտադրության նոր մարդատար ավտոմեքենաներ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 12 տնտեսվարող սուբյեկտ: Ռուսական արտադրության նոր մարդատար ավտոմեքենաների ներկրման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 4590 մեքենա, իրացման ծավալը՝ 4378 մեքենա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ արժեքային արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 98,7 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ անճաանց խմբի՝ «Արմենիա Լադա» ՀՁ ՓԲԸ-ի և «Կարկոմավտո» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 95,4 տոկոս:

«Շահագործման մեջ եղած մարդատար ավտոմեքենաներ» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 27 տնտեսվարող սուբյեկտ: Շահագործման մեջ եղած մարդատար ավտոմեքենաների իրացման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 141 մեքենա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 29,1 տոկոս:

«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 60 տնտեսվարող սուբյեկտ, որից մեկն է արտադրող: Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողերի արտադրության ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 8392 հատ անվադող, իրացման ծավալը՝ 246,8 հազ. հատ անվադող: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 46,6 տոկոս:

Աղյուսակ 6

2005 թվականին շինարարական նյութերի մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը, առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների անվանումը, մասնաբաժինը

N	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Շուկայի ծավալը		Շուկայի մասնակից ների քանակը			Առաջատար սուբյեկտը		
								անվանումը	Բաժինը (%)	
			բն.	արժ. (մլն. դրամ)	ընդամենը	ներկրող	արտադրող		բն.	արժ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	«Ասֆալտապատում»*	h.տ.	304,5	4130,2	38	X	38	«Սահակյանշին» ՓԲԸ	16,4	21,8
								«Խաչհար» ՍՊԸ	7,6	5,9
								«Արարատ Ճանշին» ՍՊԸ	6,6	4,7

2	«Բիտում»	հ.տ.	17,4	1701,2	20	20	X	«Բարսել» ՍՊԸ	74,3	76,7
								«Սոկոլ Գրուպ» ՍՊԸ	16,7	15,5
								«Գլոբալ սերվիս» ՍՊԸ	5,6	5,2
3	«Շինարարական նպատակով օգտագործվող յուղաներկեր»	տ	216,7	660,6	82	81	1	«Գարիս և Մարիամ» ՍՊԸ	23,2	15,9
								«Առանցք» ՍՊԸ	9,2	8,8
								«Գևորգ Չապալյան» ՍՊԸ	6,5	4,0
4	«Շինարարական նպատակով օգտագործվող ջրաներկեր»	տ	3362,1	1043,1	67	65	2	«Գարիս և Մարիամ» ՍՊԸ	18,4	11,4
								«Շեն Կոնցեռն» ՓԲԸ	13,6	33,7
								«Գևորգ Չապալյան» ՍՊԸ	8,8	4,4
5	«Շինարարական նպատակով օգտագործվող լաքեր»	տ	454,0	288,9	49	47	2	«Գարիս և Մարիամ» ՍՊԸ	22,9	7,9
								«Հիքսան» ՍՊԸ	7,3	2,3
								«Էդել» ՍՊԸ	5,9	6,3

* ըստ 2005 թվականի 1-ին ինն ամիսների տվյալների

«Ասֆալտապատում» ապրանքային շուկայում 2005 թվականի առաջին ինն ամիսներին գործել է 38 տնտեսվարող սուբյեկտ: Ասֆալտի արտադրության ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 304,5 հազ. տոննա, որն ամբողջությամբ իրացվել է: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 30,6 տոկոս:

«Բիտում» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 20 տնտեսվարող սուբյեկտ: Բիտումի իրացման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 17,4 հազ. տոննա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 96,6 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Բարսել» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 74,3 տոկոս:

«Շինարարական նպատակով օգտագործվող յուղաներկեր» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 82 տնտեսվարող սուբյեկտ, որոնցից մեկն է արտադրող: Շինարարական նպատակով օգտագործվող յուղաներկերի ներկրման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 2380,2 տոննա, արտադրության ծավալը՝ 47,6 տոննա, իրացման ծավալը՝ 2116,7 տոննա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 38,9 տոկոս:

«Շինարարական նպատակով օգտագործվող ջրաներկեր» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 67 տնտեսվարող սուբյեկտ, որոնցից երկուսը արտադրող են: Շինարարական նպատակով օգտագործվող ջրաներկերի ներկրման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 4003,7 տոննա, արտադրության ծավալը՝ 490,4 տոննա, իրացման ծավալը՝ 3362,1 տոննա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 40,8 տոկոս:

«Շինարարական նպատակով օգտագործվող լաքեր» ապրանքային շուկայում 2005 թվականին գործել է 49 տնտեսվարող սուբյեկտ, որոնցից երկուսը արտադրող են: Շինարարական

նպատակով օգտագործվող լաքերի ներկրման ծավալը 2005 թվականին բնեղեն արտահայտությամբ կազմել է 495,6 տոննա, արտադրության ծավալը՝ 15,6 տոննա, իրացման ծավալը՝ 454,0 տոննա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 36,1 տոկոս:

Աղյուսակ 7

2006 թվականի 1-ին կիսամյակում էներգակիրների մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների թիվը, առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների անվանումը, մասնաբաժինը

N	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Շուկայի ծավալը		Շուկայի մասնակից ների քանակը	Առաջատար սուբյեկտը		
						անվանումը	Բաժինը (%)	
			բն.	արժ. (մլն. դրամ)			բն.	արժ.
1	2	3	4	5	6	9	10	11
1	«Բենզին»	h.տ.	71,7	26860,8	7	«Ֆլեշ» ՍՊԸ	44,1	45,1
						«Քաղ Պետրոլ Սերվիս» ԱԿ	40,4	37,5
						«Սիկա Արմենիա Թրեյդինգ»	5,4	5,3
2	«Դիզելային վառելիք»	h.տ.	42,6	8576,3	11	«Ֆլեշ» ՍՊԸ	38,8	41,0
						«Սոկոլ Օյլ» ՍՊԸ	20,2	24,4
						«Քաղ Պետրոլ Սերվիս» ԱԿ	17,3	14,4

«Բենզին» ապրանքային շուկայում 2006 թվականի 1-ին կիսամյակում գործել է 7 տնտեսվարող սուբյեկտ: Բենզինի ներկրման ծավալը 2006 թվականի 1-ին կիսամյակում բնեղեն արտահայտությամբ կազմել է 70,7 հազ. տոննա, իրացման ծավալը՝ 71,7 հազ. տոննա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 89,9 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի և «Քաղ Պետրոլ Սերվիս» ԱԿ-ի մասնաբաժինները ապրանքային շուկայում համապատասխանաբար կազմել է 44,1 և 40,4 տոկոս:

«Դիզելային վառելիք» ապրանքային շուկայում 2006 թվականի 1-ին կիսամյակում գործել է 11 տնտեսվարող սուբյեկտ: Դիզելային վառելիքի ներկրման ծավալը 2006 թվականի 1-ին կիսամյակում բնեղեն արտահայտությամբ կազմել է 41,1 հազ. տոննա, իրացման ծավալը՝ 42,6 հազ. տոննա: Առաջին երեք խոշոր տնտեսվարող սուբյեկտների՝ բնեղեն արտահայտությամբ հաշվարկված մասնաբաժինների գումարը կազմել է 76,3 տոկոս: Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ի մասնաբաժինը ապրանքային շուկայում կազմել է 38,8 տոկոս:

Աղյուսակ 8

2006 թվականին մի շարք ոլորտներում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված ապրանքային շուկաների համակենտրոնացման աստիճանը, ապրանքային շուկաներում գործող գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը*

N	Ոլորտի անվանումը	Ապրանքային շուկաների թիվը	Ցածր համակենտրոնացման աստիճան ունեցող ապրանքային շուկաներ	Միջին համակենտրոնացման աստիճան ունեցող ապրանքային շուկաներ	Բարձր համակենտրոնացման աստիճան ունեցող ապրանքային շուկաներ	Ապրանքային շուկաներում գործող գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների թիվը
1	2	3	4	5	6	7
1	Գյուղատնտեսական արտադրանք և սննդի արդյունաբերություն	13	1	6	6	10
2	Ծառայությունների ոլորտ	8	X	1	7	9
3	Բնական մենաշնորհներ և փոստային ծառայություններ	8	X	X	8	11
4	Կենցաղային ապրանքներ	1	X	X	1	1
5	Ավտոմոբիլային տրանսպորտ	3	1	1	1	1
6	Շինարարական նյութեր	5	4	X	1	1
7	Էներգակիրներ	2	X	X	2	3

*Շուկան ունի համակենտրոնացման բարձր աստիճան, եթե 70% ≤ CR-3 ≤ 100%, միջին աստիճան՝ եթե 45% ≤ CR-3 < 70% ցածր աստիճան՝ եթե CR-3 < 45%: CR-3 տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Հարկ է նշել, որ որոշ տնտեսվարող սուբյեկտներ միաժամանակ ունեն գերիշխող դիրք մի քանի ապրանքային շուկաներում:

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները

Տնտեսական մրցակցության կարգավորման ու վերահսկման աշխատանքները 2006 թվականին ևպատակաուղղվել են գերիշխող դիրքի չարաշահումների, անբարեխիղճ մրցակցության դրսևորումների, մրցակցության սահմանափակումների բացահայտմանը, Հանձնաժողովի որոշումների կատարման ապահովմանը, ինչպես նաև՝ Օրենքի փոփոխությունների և լրացումների մշակմանը:

Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման ուղղությամբ, հետագայում դրանց դադարեցման և բացառման նպատակով: 2006 թվականին իրականացված հետազոտությունների արդյունքում բացահայտվել են անբարեխիղճ մրցակցության մի շարք դրսևորումներ «Լավաշ», «Կարագ», «Ալկոհոլային խմիչքներ» և «Հանքային ջրերի շշալցում» ապրանքային շուկաներում: Նշված ապրանքային

շուկաներում իրականացված դիտարկումների և տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմում-բողոքների հիման վրա դրանցում գործող 10 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ: Հանձնաժողովը հայտնաբերել է մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրվող և իրացվող ապրանքների ապրանքային նշանի բառային, գունային և պատկերային համադրությունների ապօրինի օգտագործման փաստեր, ինչը սպառողների մոտ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսվարող սուբյեկտի առաջարկած հանրահայտ ապրանքի անվանումով ապրանքային նշանի և արտաքին տեսքի նկատմամբ, դրանք որակվել են որպես տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացում՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորում և նշանակվել է տուգանք: Ինչպես նաև արտադրվող և իրացվող սննդամթերքի ապրանքատեսակի վրա հայտնաբերվել է արտադրության տարեթվի, ամսվա, օրվա, արտադրողի գտնվելու վայրի, ծագման երկրի վերաբերյալ պարտադիր տեղեկատվության բացակայություն, որը որակվել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն, և նշված ընկերությունների նկատմամբ նշանակվել է տուգանք:

Հանձնաժողովը նաև ուսումնասիրել է «Տվյալների հաղորդման միջազգային հասանելիության ծառայություն (ինտերնետ հասանելիության համար)» և «Միջազգային վարձակալված շղթաների ծառայություն ինտերնետ հասանելիության համար» ապրանքային շուկաներում «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ի վարքագիծը: «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ն նշված ապրանքային շուկաներում հանդիսանում է առանց մրցակցի գերիշխող դիրք ունեցող: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ ներկայումս տվյալների հաղորդման միջազգային հասանելիության ծառայությունները և, հետևաբար, նաև դրանց սակագները տարանջատված չեն տվյալների ուղարկման և տվյալների ստացման միջազգային ծառայությունների: Փաստորեն, ինտերնետ ծառայություն մատուցողներն առանց «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ի միջնորդության ունենալով տվյալների արբանյակային ստացման հնարավորություն, զրկված էին տվյալների միայն ուղարկման ծառայությունը ձեռք բերելու հնարավորությունից, այսինքն, տվյալների ուղարկման միջազգային ծառայությունների (որոնք «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքն են) հետ միաժամանակ անուղղակիորեն տրամադրվում էին նաև տվյալների ստացման միջազգային ծառայությունները (որոնք «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքը չեն հանդիսանում): Ստացվում էր, որ ինտերնետ ծառայություն մատուցողները ստիպված էին նույն՝ տվյալների ստացման ծառայության համար վճարել երկու անգամ: Հանձնաժողովը հանձնարարեց «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ին եռամսյա ժամկետում ձեռնարկել միջոցներ՝ արբանյակային կապուղիներով միայն ուղարկման (ելքային) ծառայություններն ապահովելու, ինտերնետ ծառայություն մատուցողների հետ իրենց առաջարկները քննարկելու և լուծում տալու համար:

«Ղ-Տելեկոմ» ընկերության գրության հիման վրա իրականացվել են «Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ» ապրանքային շուկայում գերիշխող «Արմենթել» ընկերության վարքագծի համապատասխան ուսումնասիրություններ՝ հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական հեռախոսային ծառայությունների մատուցման բացառիկ իրավունքի հիման վրա սահմանված փոխկապակցման վճարների առկայության պայմաններում որոշակի ժամանակահատվածում բաժանորդների մի մասի համար ցածր գնի (զեղչի) կիրառում, որի օբյեկտիվ հնարավորությունը մրցակիցը չունի, որը կարող է հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակման կամ արգելման՝ իր մրցակցին տվյալ ապրանքային շուկայից դուրս մղելով, ինչը Հանձնաժողովի որոշմամբ որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում: Գերիշխող դիրքի չարաշահման համար Հանձնաժողովը «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ի նկատմամբ նշանակել է տուգանք՝ ընկերության 2005 թվականի շարժական կապի գլոբալ համակարգի GSM ծառայությունների մատուցումից ստացված հասույթի մեկ տոկոսի չափով՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության պետբյուջեի և հանձնարարել է «Արմենթել ՀՁ» ՓԲԸ-ին՝ դադարեցնել ու հետագայում բացառել իրավախախտումը:

Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա ավիավառելիքի ծառայությունների ոլորտում Օրենքի հնարավոր խախտման կապակցությամբ իրականացվել են համապատասխան հետազոտություններ՝ ավիավառելիքի պակասորդի պարբերաբար կրկնվող դեպքերի պատճառները պարզելու նպատակով (գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի՝ ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից արհեստական պակասորդի ստեղծման առումով): Ուսումնասիրության նպատակն էր ավիավառելիքի լիցքավորման ծառայությունների ոլորտում ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելը, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը, ինչպես նաև հակամրցակցային գործունեության մասին նախազգուշացումը: Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը՝ սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ավիավառելիքի լիցքավորման ծառայությունների հետ կապված հարաբերությունները կանոնակարգելու նպատակով:

Միաժամանակ, Հանձնաժողովը որոշ խնդիրներ է ունենում՝ կապված դատարանում տարվող վարույթների հետ: Խնդիրն այն է, որ դատավորները քննելով տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառին առնչվող գործերը երբեմն հաշվի չեն առնում մրցակցության օրենսդրության առանձնահատկությունները:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի տարեկան գործունեության ծրագրի, մշակվել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Օրենքի նախագիծ):

Օրենքի նախագիծը մշակելիս հաշվի է առնվել Հանձնաժողովի գործունեության ընթացքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրառման փորձը և Հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովմանը, գործառույթների իրականացմանը և Օրենքի կիրարկման արդյունավետության բարձրացմանը վերաբերող մի շարք դրույթների հստակեցման անհրաժեշտությունը: Օրենքում նախատեսվող լրացումները և փոփոխությունները նպատակաուղղված են Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների ցանկի ընդլայնմանը և հստակեցմանը, հակամրցակցային համաձայնություններին վերաբերող դրույթների լրամշակմանը, այդ թվում՝ դրանց դրսևորման հնարավոր բոլոր ձևերի սահմանմանը, գերիշխող դիրքին ու դրա չարաշահմանը վերաբերող դրույթների առավել հստակ որոշմանը, «մենաշնորհ» (Օրենքում՝ նոր) հասկացության ամրագրմանը, պետական օժանդակության վերաբերյալ նոր գլխի ավելացմանը, Հանձնաժողովի լիազորությունների լրամշակմանն ու ընդլայնմանը, Օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների փոփոխմանն ու լրացմանը: Նախագծի մշակման ընթացքում հաշվի են առնվել նաև միջազգային առաջավոր փորձը և, առանձնապես, եվրոպական երկրների հակամենաշնորհային օրենսդրության իրավակիրառ պրակտիկան: Այդ խնդրում օժանդակություն է ցուցաբերվել Եվրամիության՝ «Աջակցություն Հանձնաժողովին և վերջինիս կարողությունների ընդլայնում» ծրագրի, ԱՄՆ ՄՋԳ-ի «Առևտրային օրենք և տնտեսական կարգավորում» ծրագրի ներքո գործող փորձագետների կողմից:

_Միջազգային համագործակցությունը 2006 թվականին հիմնականում ուղղվել է Հանձնաժողովի իրավասության շրջանակներում ծառացած միջազգային պարտավորությունների կատարմանն ու միջազգային կառույցների կողմից կազմակերպվող միջոցառումներին Հայաստանի շահերի պաշտպանությանն ու քարոզչությանը, արտերկրի առաջատար փորձի փոխանակմանն ու ներդրմանը, տնտեսական ինտեգրացմանը, մասնագետների որակավորման բարձրացմանը, Հանձնաժողովի շահերից բխող միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագրերի նախագծմանն ու իրականացմանը:

2006 թվականին Հանձնաժողովը շարունակել է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Տարվա ընթացքում Հանձնաժողովի կողմից հրատարակվել է պաշտոնական տեղեկագրի 2 համար: Հանձնաժողովի նիստերը եղել են բաց և հրապարակային, դրանց հրավիրվել են ոչ միայն քննարկման առարկա նյութի շահագրգիռ կողմերը, այլ նաև ԶԼՄ ներկայացուցիչները՝ առանց որևէ խտրության կամ

բացառության, քննարկումներից հետո հետաքրքրություն առաջացնող խնդիրների վերաբերյալ տեղում կազմակերպվել են բլից-ասուլիսներ և հարցազրույցներ, տրամադրվել է պահանջված տեղեկատվությունը: Լայնորեն լուսաբանվել են Հանճնաժողովի կողմից քննարկվող հարցերը: Ակտիվորեն գործարկվում է Հանճնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքը, այնտեղ օպերատիվորեն տեղադրվում են Հանճնաժողովի գործունեության, ոլորտին առնչվող օրենսդրական փոփոխությունների մասին, այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնցից պարբերաբար օգտվում են լրագրողները, տնտեսվարող սուբյեկտները եւ այլոք:

Գլուխ 4. Հանճնաժողովի 2006 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության 2006 թվականի բյուջեով, որպես Հանճնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս նախատեսվել է 159210,5 հազար դրամ:

Հանճնաժողովի 2006 թվականի ֆինանսական հաշվետվությունը /ըստ տնտեսագիտական հոդվածների/ ներկայացվում է ներքոհիշյալ աղյուսակով.

Աղյուսակ 9
2006 թվականի ֆինանսական տարում նախատեսված և փաստացի ծախսեր

(հազ. դրամ)

h/h	Ծախսերի անվանումը	Նախատեսված	Ծախսված
1	Աշխատավարձ	120000,0	119945,6
2	Պարտադիր սոց.ապահովագրության վճարներ	16836,1	16836,0
3	Գրասենյակային ապրանքներ և նյութեր	2800,0	2799,5
4	Գործուղումներ, ծառայողական ուղևորություններ	2682,1	2678,6
5	Տրանսպորտի ծառայությունների վճարներ	4980,0	4980,0
6	Կապի ծառայության վճարներ	5779,4	5775,5
7	Էլեկտրաէներգիայի ծախս	4200,0	4200,0
8	Ջրմուղ-կոյուղուց օգտվելու վարձ	33,9	33,9
9	Այլ կոմունալ ծախսեր	69,0	69,0
10	Ներկայացուցչական ծախսեր	500,0	500,0
11	Այլ ծախսեր	1330,0	1283,9
	ԸՆԴԱՄԵՆԸ	159210,5	159102,0

Հավելված 1.

2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված ռեեստրում գրանցված տնտեսվարող սուբյեկտները

h/h	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Ապրանքային շուկայի անվանումը	Մասնաբաժինը
1	«Հեռուստատեքստ» ՍՊԸ	Հեռուստատեքստ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
2	«Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ	Հավի ձու՝ կճեպով	Գերիշխող դիրք ունեցող
3	«Դվին Հոլդինգ» ՓԲԸ	Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)	Գերիշխող դիրք ունեցող
4	«Գրանդ Տոբակո» ՀՁ ՍՊԸ	Ծխախոտ ֆիլտրով	Գերիշխող դիրք ունեցող
		Ծխախոտ առանց ֆիլտրի	Գերիշխող դիրք ունեցող (չի հանդիպում էական մրցակցության)
5	«Մուլտի Լեոն» ՍՊԸ	Երևան քաղաքի սեղմած բնական գազ	Գերիշխող դիրք ունեցող
6	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ	Նատրիումի հիպոքլորիդ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
7	«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ	Օդային երթևեկության սպասարկում (աերոնավիգացիա)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
8	«Բորոդինո» ՍՊԸ	Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ	Գերիշխող դիրք ունեցող
9	«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ		Գերիշխող դիրք ունեցող
10	«Շինարար» ԱԿ	Ապակի	Գերիշխող դիրք ունեցող
11	«Գապէքս» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող
12	«Սետեքս» ՓԲԸ	Ամրան	Գերիշխող դիրք ունեցող
		Ամրալար	Գերիշխող դիրք ունեցող
13	«Շանթ Պլյուս» ՍՊԸ	Պաղպաղակ	Գերիշխող դիրք ունեցող
14	«Ֆլիտֆուդ» ՍՊԸ	Կարագ	Գերիշխող դիրք ունեցող
		Նրբերշիկ և սարդելկա	Գերիշխող դիրք ունեցող
		Էթիլային սպիրտ	Գերիշխող դիրք ունեցող
15	«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	Թթվասեր	Գերիշխող դիրք ունեցող
16	««Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն» ՓԲԸ	Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում հաշմանդամների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում ընտանեկան նպաստի տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)

		Ջրաղվածության ծառայությունների ծրագրի շրջանակներում իրականացվող գործազուրկների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների՝ «Գործ» համակարգի ձեռքբերում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
17	«Գեղարդ մսամթերքի կոմբինատ» ՍՊԸ	Մսամթերք	Գերիշխող դիրք ունեցող
18	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
19	«Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ	Շամպայն և փրփրուն գինիներ	Գերիշխող դիրք ունեցող (չի հանդիպում որևէ էական մրցակցության)
20	«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ	Կերակրի աղ	Գերիշխող դիրք ունեցող (չի հանդիպում որևէ էական մրցակցության)
		Քարաղ (կերային)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Աղացած աղ (տեխնիկական)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
21	«ՀայՌուսգազարդ»	Բնական գազ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
22	«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ	Գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքներ	Գերիշխող դիրք ունեցող
23	«Մոնա Գրուպ» ՍՊԸ	Լվացքի փոշի (ձեռքով լվացքի համար)	Գերիշխող դիրք ունեցող
		Տնտեսական օճառ	Գերիշխող դիրք ունեցող
24	«Երևանի գարեջուր» ՓԲԸ	Գարեջուր	Գերիշխող դիրք ունեցող
25	««Կոտայք» գարեջրի գործարան» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող
26	«Արարատցեմենտ» ՓԲԸ	Ցեմենտ	Գերիշխող դիրք ունեցող
27	«Միկա-ցեմենտ» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող
28	«Օրիֆլեյմ Քոսմեթիքս» ՍՊԸ	Լոգանքի միջոցներ	Գերիշխող դիրք ունեցող
29	«ԱրմենՏել ՀՁ» ՓԲԸ	Տվյալների հաղորդման միջազգային հասանելիության ծառայություն (ինտերնետ հասանելիության համար)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Միջազգային վարձակալված շղթաների ծառայություն ինտերնետ հասանելիության համար	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական տեղական հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական միջքաղաքային հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական միջազգային հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար վարձակալած գծի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)

		Ծառայություն մատուցողի կողմից տեղադրված կամ սպասարկվող հեռախոսային ցանցի հիմնական ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հանրային շարժական փեյջինգ ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ոչ հիմնական ներպետական կամ միջազգային հեռախոսային ծառայություններ (ֆրի ֆոն)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Տվյալների փոխանցման համար վարձակալած գծերի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		«Հավաքիր համարը» կամ հավելավճարով ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող
30	«Գաջեգործ» ՓԲԸ	Գաջ	Գերիշխող դիրք ունեցող
31	«Գաջ» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող
32	«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	Ուղևորափոխադրող օդանավերի թռիչք-վայրէջքի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Բեռնափոխադրող օդանավերի թռիչք-վայրէջքի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ուղևորներին սպասարկող օդանավակայանում յուրաքանչյուր մեկնող ուղևորի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Տելեսկոպիկ կամրջի օգտագործում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Բազավորվող և չբազավորվող ավիաընկերության ուղևորատար օդանավերի կայանում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ուղևորափոխադրող օդանավերի վերգետնյա սպասարկման հիմնական ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Բեռնափոխադրող օդանավերի վերգետնյա սպասարկման հիմնական ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Բեռնամշակման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ավիավառելիքի լիցքավորման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Ավտոմեքենաների կայանում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
33	«Տիգրան» ՍՊԸ	Երևան-Նոր Խարբերդ և հակառակ ուղղությամբ ուղևորափոխադրումներ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
34	«Բագրատուր» ՍՊԸ	«Երևան-Անթալիա(Թուրքիա)-Երևան» ուղղությամբ ավիատոմսերի իրացում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
35	«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ	Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող
36	«Արմինկո» ՍՊԸ	Ինտերնետ ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող
37	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	Խմելու ջուր	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
38	«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)

39	«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
40	«Նոր-Ակունք» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
41	«Բարսել» ՍՊԸ	Բիտում	Գերիշխող դիրք ունեցող
42	«Հայփոստ» ՓԲԸ	Ներպետական նամակագրական թղթակցության ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Հեռագրային կապի ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Փոստային կապի և սուրհանդակային ճեպընթաց կապի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող
43	«Սևան» ՍՊԸ	Ադամաթուզ (բանան)	Գերիշխող դիրք ունեցող
44	«Քեթրին» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող
45	«Վալլետտա» ՍՊԸ	Թեյ	Գերիշխող դիրք ունեցող
46	«Ակվատեխավտոմատիկա» ՓԲԸ	Կարմրախայտ և իշխան ձկնատեսակներ	Գերիշխող դիրք ունեցող
47	«Մալիկա» ՍՊԸ	Սառեցրած ձկներ	Գերիշխող դիրք ունեցող
48	««Արմենիա-Լադա» և «Կարկոմավտո» ընկերություններ» անճանց խումբ	Ռուսական արտադրության նոր մարդատար ավտոմեքենաներ	Գերիշխող դիրք ունեցող (չի հանդիպում որևէ էական մրցակցության)
49	«Հայկական երկաթուղի» ՓԲԸ	Երկաթուղային բեռնափոխադրումների ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Երկաթուղային ուղևորափոխադրումների ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Երկաթուղային շարժակազմի շահագործման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Երկաթգծի ենթակառուցվածքի շահագործման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
50	«Գրանդ Սան» ՍՊԸ	Կենցաղում օգտագործվող էլեկտրական լամպեր	Գերիշխող դիրք ունեցող
51	«Կաֆե դյու Բրազիլ» ՍՊԸ	Սուրճ	Գերիշխող դիրք ունեցող
52	«Սալեքս Գրուպ» ՍՊԸ	Շաքարավազ	Գերիշխող դիրք ունեցող
53	«Ֆլեշ» ՍՊԸ	Դիզելային վառելիք	Գերիշխող դիրք ունեցող
		Բենզին	Գերիշխող դիրք ունեցող
54	«Քաղ Պետրոլ Սերվիս» Ա/Կ	Բենզին	Գերիշխող դիրք ունեցող
55	«Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ	Կոնյակ	Գերիշխող դիրք ունեցող
56	«Նյու-Շահաբ» ՍՊԸ	Քիմիական մաքրման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող
57	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ	Դեղերի և դեղանյութերի պետական գրանցման համար փորձաքննություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
		Դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման հավաստագրման համար փորձաքննություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)
58	«Ադամանդ Կ» ՍՊԸ	Արդյունահանված հանքային ջուր	Գերիշխող դիրք ունեցող (չի հանդիպում որևէ էական մրցակցության)
59	««Ջրնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	Շշալցված աղբյուրի ջուր	Գերիշխող դիրք ունեցող
60	«ՄԳԱ Վոթքըր» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող